

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալներ Ս. Թարվերդյանը և Ա. Գրիգորյանը մասնակցեցին «Հայկական բնաշխարհի գույները» խորագիրը կրող ցուցահանդեսի բացմանը

03.07.2014



ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի նախաձեռնությամբ ս/թ. հուլիսի 3-ին, ժամը՝ 15-ին, Հայաստանի պետական պատկերասրահի Վայոց ձորի մասնաճյուղում հանդիսավորությամբ բացվեց «Հայկական բնաշխարհի գույները» խորագիրը կրող ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր ՀՀ մշակույթի նախարարության «Ցուցահանդեսային կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀԱՊ Եղեգնաձորի մասնաճյուղի կողմից, «Ճամփորդող ցուցահանդես» ծրագրի շրջանակում:

Բացմանը մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալներ Սամվել Թարվերդյանը և Արամ Գրիգորյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Կամո Սահակյանը և աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, մարզպետարանի այլ պաշտոնյաներ, Վայոց ձորի մշակութային հասարակայնության ներկայացուցիչներ:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին նաև «Ցուցահանդեսային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչատուր Աբրահամյանը, ցուցահանդեսների կազմակերպման բաժնի վարիչ Սուրեն Սաֆարյանը, ֆոնդապահ Բարդուղ Պետրոսյանը:

Բացման խոսքով հանդես եկավ պատկերասրահի տնօրեն Քնարիկ Բաբախանյանը: Ներկաներին ողջունի խոսք ասացին փոխմարզպետ Սամվել Թարվերդյանը և ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Սուրեն Սաֆարյանը:

Ցուցահանդեսում կենտրոնի ֆոնդային հավաքածուից ընդգրկված է 25 հեղինակների մեկական կտավ, որոնցում ավելի վառ է արտահայտված հայկական բնաշխարհի գույների ամբողջական ներկայանակը: Ցուցադրությունը կշարունակվի մինչև ս/թ հուլիսի 20-ը: